ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վաղարշատ համայնքի ավագանու «Վաղարշապատ համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի որոշումը կատարելու, բյուջեի ֆոնդային մասի եկամուտների ավելացումը Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 27.12.2024 թվականի թիվ 2085-Ա որոշմամբ՝ 2022 և 2023 թվականներին հավանության արժանացած և ՀՀ մարզպետարանների ու համայնքների հետ կնքված պայմանագրերով համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ցանկի.

1)Ավելացնել Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) 1261 տողը 513855.0 հազ. դրամ և ուղղել՝

ա. Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարման /բաժին 01, խումբ 1, դաս 1/ <Նախագծահետազոտական ծախսեր> հոդվածին /հոդ. 5134/ 2002.0 հազ. դրամ;

բ. Նախադպրոցական կրթության /բաժին 09, խումբ 1, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածին /հոդ. 5113/ 507538.8 հազ. դրամ և <Նախագծահետազոտական ծախսեր> հոդվածին /հոդ. 5134/ 4314.2 հազ. դրամ:

2)Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները: